ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- մայիսի 2022 թվականի №-Ա
ք. Երևան

«ԼԵՌ ԵՎ ՋՈՒՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի օգոստոսի 4-ի №292Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) 3-րդ կետով «ԼԵՌ ԵՎ ՋՈՒՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) պարտավորեցվել է նշված որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում (մինչև 2022 թվականի փետրվարի 10-ը) հանձնաժողով ներկայացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած «Չիչխան» փոքր հիդրոէլեկտրակայանի (այսուհետ՝ Կայան) ճշգրտված ելքերով և ջրառի ու ջրահեռացման նիշերով նախագիծը (նախագծի փոփոխությունները)՝ դրական փորձագիտական եզրակացություններով, իսկ դրա անհրաժեշտության բացակայության դեպքում՝ համապատասխան հիմնավորումներ,

բ) Որոշման 3-րդ կետով սահմանված պարտավորությունը Որոշմամբ սահմանված ժամկետում՝ այն է մինչև 2022 թվականի փետրվարի 10-ը, Ընկերության կողմից չի կատարվել, ինչի արդյունքում նշված փաստի ուսումնասիրության նպատակով Ընկերության նկատմամբ 2022 թվականի փետրվարի 25-ից հարուցվել է վարչական վարույթ, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2022 թվականի փետրվարի 25-ի №ԳԲ/34.3-Մ2-12/596-2022 գրությամբ,

գ) Ընկերությունը, հարուցված վարչական վարույթի շրջանակում, 2022 թվականի մարտի 2-ի №24 գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել Կայանի ճշգրտված ելքերով և ջրառի ու ջրահեռացման նիշերով նախագիծը, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2022

թվականի փետրվարի 25-ին տրված շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ԲՓ0013-22 դրական եզրակացությունը և «ՋՐԱՐԲԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի հուլիսի 15-ի №01/Ջ-ԼՋ գրությամբ տրված փորձաքննական դրական եզրակացությունը, իսկ սույն թվականի մայիսի 12-ի №54 գրությամբ ներկայացրել է՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2021 թվականի սեպտեմբերի 9-ի №58-Ա որոշմամբ ստեղծված պետական համալիր փորձաքննական հանձնաժողովի կողմից Կայանի վերազինման նախագծային փաստաթղթերի վերաբերյալ տրված պետական համալիր փորձաքննության դրական №67 եզրակացությունը,

դ) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Որոշման 3-րդ կետով սահմանված պահանջը, մինչդեռ մինչև պատասխանատվության միջոց կիրառելու մասին Հանձնաժողովի որոշման ընդունումը, վերացրել է թույլ տված խախտումը՝ Հանձնաժողով ներկայացնելով Որոշման 3-րդ կետով պահանջված փաստաթղթերը, և այդ խախտման հետևանքով չի վտանգվել և չէր կարող վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, այն ուղղակիորեն չի հանգեցրել մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման, լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման, այլ կարգավորվող անձի օրինական շահերի խախտման, կարգավորվող գործունեության խոչընդոտման կամ լիցենզիայի պայմանների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, առկա չէ խախտման կատարման կրկնակիություն և Ընկերությունը Հանձնաժողովի 2006 թվականի օգոստոսի 11-ի №171Ա որոշմամբ իրեն տրամադրված Կայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0214 լիցենզիայի գործողության ժամկետում Որոշման 3-րդ կետով նախատեսված պահանջի խախտում չի կատարել: Տվյալ դեպքում, Հանձնաժողովը գտնում է, որ հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման, և

հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, 34-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կարճել Ընկերության նկատմամբ Որոշման 3-րդ կետով սահմանված պարտավորության հնարավոր խախտման փաստի ուսումնասիրման նպատակով 2022 թվականի փետրվարի 25-ին հարուցված վարչական վարույթը:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական

դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
մայիսի 2022թ.